

4.2.2. Ներքին զբոսաշրջություն

Ըստ ստացված հաշվետվությունների տվյալների՝ 2010թ. հունվար-դեկտեմբերին հանրապետության տարածքում տեղաբաշխված զբոսաշրջիկների կոլեկտիվ և անհատական տեղավորման միջոցներում (կացարաններում) տեղավորվել են 456432 զբոսաշրջիկներ¹ (ՀՀ ռեզիդենտներ), ինչը 2009թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ աճել է 4.8%-ով:

Ներքին զբոսաշրջությունն ըստ նպատակի

(մարդ)

	2009թ. հունվար- դեկտեմբեր	2010 թ. հունվար- դեկտեմբեր	Աճի տեմպը, %	Տեսակարար կշիռը (2010թ. հունվար-դեկտեմբեր, %)
Ընդամենը զբոսաշրջիկներ²	435674	456432	104.8	100
որոնցից ըստ նպատակի՝				
գործնական	103154	107104	103.8	23.5
հանգստի և ժամանցի	229303	258872	112.9	56.7
բուժման	54931	50362	91.7	11.0
այլ	48286	40094	83.0	8.8

¹ Ըստ ՄԱԿ-ի զբոսաշրջիկության համաշխարհային կազմակերպության մեթոդաբանության (ՁՀԿ) **ներքին զբոսաշրջիկ** է համարվում ցանկացած անձը, որը ճանապարհորդում է իր հիմնական բնակության վայրի երկրի սահմաններում (սովորական բնակության միջավայրից դուրս), այսինքն որևէ երկրի բնակիչների ճանապարհորդությունն իրենց իսկ երկրում կամ հիմնական բնակության երկրում, անկախ ճանապարհորդության նպատակից (բացի ուսման նպատակով) ոչ պակաս քան 24 ժամ և ոչ ավել քան անընդմեջ 1 տարի ժամանակով և ճանապարհորդության գլխավոր նպատակը չի հանդիսանում գործունեությամբ զբաղվելը, որի համար վճարվում է այցելած վայրում:

² Տվյալներն արտացոլում են միայն հյուրանոցներում, հյուրանոցային հանգրվաններում, առողջարաններում, հանգստյան տներում հաշվառված զբոսաշրջիկներին: